

Յորգանան կ'երթար կամ ուրիշ Ս. Տեղեր՝ պաշտամունքի համար կը հետեւէր այս տաղարանին որ ըստ պատշաճի կը պարունակէր կարդացումն, գանձեր եւ սաղեր. (նոյն եկեղեցիին կամ վանքին պատմութեան համար տեսնել Հ. Վ. Ե. էջ 413-22):

Ունինք նաև ուրիշ աւագութիւններ ալ որոնք են.

ա) Եպիփանի վանականի յիշատակած առանդոսթիւնը՝ Քրիստոսի ւկրոնքեան ժամանակ Ս. Յովնանեկս Մկրսչի կեցած քարին մասին. — Եպիփանի վանականը Ս. Երրորդութեան եկեղեցիէն զատ, Յորգանանու եղերքը ցոյց կուտայ Ս. Կարապետի անուամբ եկեղեցին՝ որուն կողակին մէջ (ըստ իրեն) կը տեսնուի այն քարը որուն վրայ կը կենար Ս. Յովհաննէս Մկրտիչ՝ Փրկչին մկրտութիւնը կատարելու համար (P. G. CXX, 269, 272): Ռուս Դանիէլ վանականի համաձայն (1106), այս մատուռը որ շինուած էր բարձր դիրքի մը վրայ վանքին արեւելեան կողմը՝ Քրիստոսի մկրտութեան ճիշդ տեղն էր: Այդ տեղէն մինչև Յորգանան քարընկէց մը հեռու է: Համաձայն Փոկասի (1177) Յորգանանի եղերքէն քարընկէց մը հեռու կը գտնենք քառակուսի և գմբէթաւոր շէնք մը ուր Փրկիչը շրջապատուած է գետին ջուրերէն: (Տե՛ս Անդ. էջ 952): Այն ատեն կը մտածուէր թէ Փրկիչը գետը չէր մտած, այլ գետը ինք եկած էր անոր. աւանդութիւն մը՝ որ յառաջ եկած էր Յորգանանէն չափով մը հեռու մկրտութեան մեծ քարին պատճառաւ: 1212ին մկրտութեան եկեղեցին աւերակ էր և ԺԿ. դարուն անհետացած է (R. Bl. 1932, էջ 246):

Աւետարանի պատմութենէն դուրս, աւանդութիւնը կ'ըսէ թէ հրեշտակները ներկայ էին Յիսուսի